

Hentchak :

ORGANE DU PARTI

REV. ARMÉNIEN

HENTCHAKISTE.

ՀԵՉԱԿ

ADRESSE

M. BELLART,

85, Peckham Rye

LONDON, S.E.

Angleterre.

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Յ Ե Ղ Ա Փ Ո Ւ Ա Կ Ա Ն

Գ Ա Ղ Ա Փ Ա Ր Ը

Հայութեան մէջ մեծ եղաւ յեղափոխական գաղափարի դերն ու նշանակութիւնը: Այդ գաղափարը հայութեանն ուղղեց դէպի արթնութիւն: Այդ գաղափարը հայութեանը պարզեց իր ներկայ պատմական րօպէի իմաստը և այն ուղին, որ այդ իմաստը բացել է նրա առաջ: Այդ գաղափարն առաջացրեց նրա մէջ բարոյական ոյժ, բարձրացրեց նրա ազգային ոգին և մարդկային կոչումը, ընդլայնեց նրա հոգեկան ու մտաւոր հօրիզոնը, հարստացրեց նրա հասարակական անդաստանը նորանոր հայեացքներով, կեանքի նոր իմաստով ու վսեմ նպատակներով:

Եթէ յեղափոխական կռիւն տակաւին չէ հասել իր մօտակայ անմիջական նպատակներին—և դրա պատճառն է թշնամու զօրութիւնը՝ միացած մեծ պետութիւնների զաղանի գործակցութեան կամ անտարբերութեան հետ,—անհրեքելի է սակայն, որ այդ կռիւն հարթեց ձեռնապարհը դէպի ապագան, անհրեքելի է սակայն, որ այդ կռիւն տապալեց այն ամուր պատնէշը, որի ետեւը, դարերից ի վեր, բոյն էր դրել՝ աւանդական դարձած ստրկութեան իրաւունքը: Այդ իրաւունքի սկզբունքը, մի զօնդակ զօրութիւն, ստացաւ պատմական հարւած և կրեց պարտութիւն միանգամից ընդ միշտ: Այդ սկզբունքը հիմա այլ ևս չէ յենւում մի հլու ժողովրդի դարևոր խոնարհութեան ու տրդիտութեան վրայ: Եւ պահւում է հազիւ-հազ, մեծ ձիգերով, սրի ուժով և արեան դնով: Մի ժողովուրդ, որ հազիւ դեռ տասն, տասն և հինգ տարի առաջ անտրտունջ, անբողբ կերպով, աւանդաբար տանում էր մի հրէշաւոր լծի ամբողջ ծանրութիւնը, և իր այդ յոռի անձնասպան ու դառն կացութիւնը կարծես թէ դանում էր բնական ու յաւիտենական,—այդ ժողովուրդն այսօր կերպարանափոխւած է: Այսօր նրա ամենամութ խաւերում իսկ թափանցել է լուսոյ կայծ և երկկղած

միտքը կենդանանում է շիտակցութեան շողից: Այսօր նա պզում է, նա տեսնում է, որ իր ստրկական կացութիւնը յաւիտենական բաժինը չէ իրա ճակատագրի.—այդ կացութիւնը ժամանակաւոր է, որ տեւել է մինչև օրս և որ հիմա տեղի է տալիս մի նոր, մարդավայել կացութեան, և պէտք է որ տեղի տայ: Այդ հասկացողութիւնից էլ պիտի ըստ ինքեան առաջանար այն համոզումը, թէ պէտք է, ուրեմն, գործ դնել ամեն ջանք և լինել նպաստիչ այդ կացութեան, և իրերի այդ դրութեան փոխանցութեան դէպի լաւը: Հէնց այդ համոզումն էլ կազմեցաւ հայ ժողովրդի մտքում: Բայց ըստ ինքեան, իր ներքին տրամաբանութեամբ ինչ է այդ համոզումը, եթէ ոչ յեղափոխական: Եւ ահա այդպէս թափանցեց հայ ժողովրդի մէջ յեղափոխական գաղափարը:

Այդ եղաւ յեղափոխական գաղափարի պատմական գործը մեզսնում: Այդ գործը, այնքան բարձր, որքան և ժամանակայարմար, այլ ևս կը մնայ կենդանի և անջնջելի հայ ժողովրդի կեանքում: Այլ ևս նա կազմում է այդ կեանքի երակը, արեւը, սիրտը: Այլ ևս նա ձուլւած է այդ կեանքի ամեն սոռաջողիմական պահանջների հետ, նրանից կազմելով դրանց ներքին իմաստը, մղիչ ոյժը, զեկավար միտքը: Այլ ևս նա հիմնաքարն ու նախնական պայմանն է այդ կեանքի, նրա ինքնագործունէութեան, նրա զարգացման: Եւ յեղափոխական գաղափարը հաստատեց այդ մեծ գործը միակերպ ուժով ամբողջ հայութեան վրայ, հեծող երեք լծի տակ, իրանց ձնշող կառավարութիւնների նըկատմամբ

Ե՛հ, գիտե՛ք, կարող են գտնւել—և շատ—անպատրաստ մտքեր, յոյսի դէմ աչք ծածկող քննաթաթախ զարթնածներ, որոնք չեն ըմբռնիլ և չեն ընդունիլ այդ պատմական իրողութիւնը, յեղափոխական գաղափարի այդ գործը: Բայց և այնպէս դա չի խանգարիլ, որ այդօրինակ ըմբոստացած մութ մտքերը հէնց իրանք էլ ենթարկւած լինեն նոյն իրողութեան ներքին զօրութեան: Որովհետեւ այդ զօրութիւնն այլ ևս դարձել է մեր կեանքի հիմնական օրէնքը. որովհետեւ յեղափո-

խական գաղափարն է, որ այսուհետև կրում է իր մէջ մեր ազգային ու մարդկային գոյութեան, ազատագրութեան ու զարգացման եռեակ իմաստը: Մեռցրէ՛ք այդ գաղափարը մեր մէջ — և մենք նորից կը զլորենք անցած դարերի ճահճային վիճակը, ահաւոր խաւարը և մահացման մէջ:

Բայց իրերի տրամաբանութիւնը միշտ աւելի զօրեղ է քան մարդկանցը: Անհատների և, առհասարակ, մարդկանց ուժից չէ կախած մեռցնել մի գաղափար, որ մարմնացել է իբրև իրողութիւն: Այժմ այդպէս չլինէր, այն ժամանակ մեր կրած սոսկալի և անվերջ հալածանքները, մեր արեան հեղեղներն արդէն պէտք է վերացրած ու խեղդած լինէին յեղափոխական գաղափարը մեզանում: Բայց հայութիւնը, ընդհանուր առմամբ, կարող է հպարտութեամբ ասել, որ նա զիտակցարար յեղափոխական է այսօր աւելի քան երբ և է:

Այն երևոյթը, որ առաջացել է նոյն իսկ կեանքի արդանդից, իբրև ստեղծածը նրա յղութեան, — նա պէտք է ամէ, զարգանայ, հասունանայ մինչ այն աստիճան, որ աստիճանի կարող է հասցնել նրան իրա իսկ ներքին իմաստը: Այն ժամանակ միայն կանհետանայ այդ երևոյթը, երբ կը կատարէ ու կը լրացնէ իր գործը, որը եղաւ նրա ծաղման պատճառ, և տեղի կը տայ նոր ծագած, իրանից աւելի լայն, երևոյթի գործունէութեան:

Յեղափոխական գաղափարը մեզանում մեր կեանքի ծնունդն է: Այս այդ կեանքի ներքին իմաստն է: Պատմական որոշ բաղէին երևան գալով այդ կեանքի պայմաններից, նա եղաւ արտայայտիչ մեր հանրական ձգտումների ու պահանջների դէպի զարգացում և առաջիկութիւն: Մեզանում նա զարթեցրեց խիղճը, թափանցեց իր լուսով ամենամութ անկիւններ, սթափեցրեց թմրած կորովը, հրահրեց քնաթափ հոգին: Մարմին ստացած իր մայր-ժողովրդից, նա հանդիսացաւ այն երիտասարդ ոյժը, որ կարողացաւ մտքի, խօսքի և գործի մէջ ձևակերպել և արտայայտել իր մօր ցաւերը, և այդ ժամանակ միայն մայրն ըմբռնեց այդ միտքը, խօսեց այդ խօսքով և ընդգրկեց այդ գործը: Այն մինչև որ չը փոխէ մեր ներկայ զրութիւնը, մինչև որ չիրագործեն մեր առաջդիմական ձգտումները, մինչև չը կատարէ մեր կեանքի ազատ և ընդարձակ զարգացման գործը — յեղափոխական գաղափարը կը փնի և կը մնայ մեր ազգային ու մարդկային գոյութեան իմաստը, ոյժը, հիմքը: Այն նա կը մղէ մեզ միշտ ընթանալ դէպի առաջ, իրագործել հարգատ Ժողովրդի ազատութիւնը և լրացնել մեր բաժին պարտականութիւնը մարդկային զարգացման ու բարօրութեան գործում:

ՄԱՐՏԻ ՀՐԱՒԵՐ

Արտում է ահագնագոռ
Թնդանօթը Բայրանում,
Խիզախ ազգի սուսերը դու
Թշնամու դէմ ծածանում:

Վարդակարմիր արշալուսի
Վես տեսարան փառապանծ
Հուտով՝ իբրև կենաց լուսի
Մի նախերգանք հիասքանչ,

Սը տարածուի հորիզոնից
Դէպի դաշտեր սիզաւետ,
Եւ կենսատու ճաճանչներից
Ազատութիւն փրկաւետ

Սը սլանայ դէմքով խրոխտ
Դէպի լեռներ վեհափառ,
Եւ խնդութեան Յոյս եռանդոտ —
Ազատ կեանքի յայտարար.

“Սուրը ձեռին, լծում արեան,
Իբրև զարմունք դիւցազանց,
Յետ բերեցին նուիրակն
Նախկին փոքր հայրենեաց:

Բայց դու, չուսու սերունդ Հայկայ,
Չես ցանկանում ընդվզել,
Առիւծ կտրած, սուր պողպատեայ
Թշնամու դէմ ծածանել:

Չես ցանկանում մի անգամ էլ
Վիստանկախ Զէյթունից
Թիւրքի գլխին պայթեցընել
Ահեղ սուրբեր շանթալից:

Թէ՞ դու անթիւ ներքին ցուեր
Քնիս ներսը տակաւին.
Բայց ահա, տես, երկիրդ աւեր
Գարձընում է թշնամին:

Նայէ առաջ. արեան ծովեր
Գոյանում են բո երկրում,
Եւ անպաշտպան հէգ գեղջուկներ
Հնոցի մէջ տապաւնում:

Հայի նախանձ, մաղձոտ մախանք
Մինչև լճը պիտ բորբոքուէր,
Եւ անպատում թոյն, անարգանք
Ամենուրեք ծաւալէր:

Արտում է ահագնագոռ
Թնդանօթը Բայրանում,
Հայն է՛ շուտով կը կուռի դու
Մարտի ահեղ դաշտերում...

Լոնդոն

Ս. ՏԱՀԻՐ.

Ք Ր Օ Ն Ի Կ Օ Ն

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆԲԻՑ

Կողմնակի ահանառակ՝ ես ուզում եմ հաղորդել ընթերցողներին իմ տպավորությունները հայ յեղափոխական կեանքի մասին վերջին մեկ-երկու տարւոյ ընթացքում: Այնքան համապատասխան է իմ մտքին ասել, հայ յեղափոխական ներքին կեանքի մասին: Սա մի քննութիւն չէ այդ կեանքի, մի բան, որի համար յօդաւորս սահմաններն արդէն բաւական չեն: Բոլորովին հետի է նաեւ իմ մտքիդ կանգ առնել այդ կեանքում առաջացած մի շարք սխալներ երկայնքների վրայ իրանց մասնաւոր հարցերում: Այն, ինչ այժմ մեզ հետաքրքրում է, դա՛ որոնել թէ այդ երկայնքները չունեն արդեօք իրանց ներքին տրամաբանական դրապաշտձառը: Անշուշտ, անհերքելի է, որ տեղի ունեցած ներքին ընթացիկութիւններում անձնական կրքերը, հոսանքները մինչև մի տգեղ տարասեռման, գրաւեցին ի վերջոյ ամբողջ ասպարէզը, եղին հնոց մի բարբարոսական բորբոքման, առիթ տւին այլանդակ գրգռումների, և այդպիսով ամենաբարձր ու մեծ հարցեր գահավիժւեցան մինչև ողորմելի պատկերացման և ապա չքացան: Անշուշտ, ներքին հակառակութիւնների պղտոր ալիքը հեղեղելով ամբողջ խորտակել է անաչառ ու լուրջ բանականութեան սահմանները և արդէն զարնում էր բուն յեղափոխական գործի պատնէշին: Դա նշանակում էր տարինների ընթացքում մի ձեռքով կառուցած շէնքը կործանել միւս ձեռքով՝ դարձած գործիք անզուսպ կրքերի քմահաճոյ գրգռումներին: Անշուշտ, դատապարտելի են այդ բոլոր երկայնքները, որովհետև մեծ է նրանց հասցրած վնասը գործին: Իսկ կարծում եմ, սակայն, որ կրքերի այդ՝ արդարեւ խաւար ասիականութեան ոգովայրերի, այլասեռած ու առեւտրի արտաքին ձևերի տակ թաքնւում է մի հիմնական երկայնք, որ և կաշխատեմ լուսաբանել այստեղ:

Հայ յեղափոխական ասպարէզը ծածկւած է տարբեր ու բազմազունի տարրերով: Այդ բոլոր տարրերն էլ յեղափոխական են արդեօք—դա մի ծանր հարց է, որի քննութիւնը ես թողնում եմ մէկ ուրիշ անգամի: Այսօր բաւականանանք այն յայտարարութեամբ, որ իրանց նկատմամբ անում են այդ տարրերը նոյն իրանք: Նրանք իրանց կարծում և համարում են յեղափոխական: Եթէ ընդունենք այդ, այն ժամանակ պէտք է ասել, որ հայեացքների, հասկացողութիւնների տարբերութեան մէկ ամբողջ անդունդ բաժանում է այդ տարրերին երկու որոշ մասի՝ միմեանց բնաւ չը նմանող, միմեանց օտար, միմեանց խորթ:

Երբ հայ յեղափոխական շարժումները, սրանից տարիներ առաջ, ընդունեցին բուռն ու վճռական կերպարանք և հանրական ծառայ, անխուսափելի ու բընական էր, որ յեղափոխական շրջաններում մուտք գործէին բազմազան տարրեր՝ անխտիր կերպով: Այդ տարրերը, սակայն, առաջացած հասարակութեան զանազան խաւերից, կուտուրական դրութեան զանազան՝ իրարից

իրեքմն հեռու կանգնած՝ աստիճաններից, իրանց հետ ներա էին բերում զանազան մտքեր, զանազան սովորություններ, զանազան տէժպէրամէնտներ: Բանի որ յեղափոխական շարժումները եռում էին, ինչպէս ջուրը կաթսայում, բանի որ մարտական կոչը պահանջում էր ամեն հայի զինւորագրութիւնը, բանի որ ինքնապաշտպանութեան զգացումը և աղաւաղութեան յայտ բորբոքում էին հայ մտքերը,—այդ զանազան տարրերը գալիս համախմբւում էին մայր-գրօշի տակ, այն դրօշի, որ ծածանւում էր մարտադաշտում, այն դրօշի, որի վրան արձանագրւած կար Հնչակեան ծրագիրը՝ իր սօցիալիստական իդէալով և իր գործնական մօտակայ նպատակներով, որոնք բացող են ուղին դէպի այդ իդէալի իրագործումն ապագայում... բայց եկան դառն օրեր, արնալի օրեր, սոսկալի օրեր. յեղափոխական շարժումները կասեցան. Եւրոպայի լուռ հաւանութեամբ թըշնամին դիմեց գաղանային արարքների. հիասթափուած և յուսահատութիւնը սկսու տիրել հայութեան: Այդ րօպէն մեծ էր իր փորձութիւններով: Եւ հէնց այդ րօպէին՝ յանկարծ միմեանց դէմ առ դէմ եկան յեղափոխական այլ և այլ տարրերը և... միմեանց ճանաչեցին: Նրանք յայտնւեցան միմեանց օտար. նրանց զգալու և մտածելու եղանակները բոլորովին խորթ էին իրար: Երեան եկաւ, որ նրանցից մէկ ամբողջ մաս լիովին զուրկ է գաղափարական հիմքից, որոշ հասարակական համոզումներից և դուրս մնացած Հնչակեան սկզբունքների սղակից: Դա եղաւ յայտարարութիւն այդ մասի սնանկութեան: Եւ այդ սնանկութիւնն էր կրկնակի՝ գաղափարական և ուրեմն նաեւ բարոյական: Որովհետև որտեղ չը կայ գաղափար, այնտեղ չէ կարող լինել բարոյական ոյժ ու հիմք: Արեւիս ծագում է առաջինից և ապա երկունն էլ սկսում են իրար վրայ ներգործել, փոխադարձաբար պայմանաւորում են իրարու միաժամանակեայ գոյ լինելը, իրարու գործօն զօրութիւնը, իրարու զուգընթաց զարգացումը:

Այդ հանգամանքը պարզեց, որ դէմ առ դէմ են կանգնած երկու այլ ևս տարբեր տարրեր՝ գաղափարական և ահագաղափարական: Դրանց ընդհանրութիւնը յայտնւեցաւ անխուսափելի: Առաջինը շարունակում էր առաջնորդել որոշ իդէալով և ունենալ իրան հիմք մի ծրագիր իր որոշ աշխարհահայեացքով ու հասարակական սկզբունքներով, որոնք՝ իրանց գաղափարական զօրութեան մէջ՝ չէին կարող պարտութիւն կրել յեղափոխական շարժումների ձախող ընթացքից, որ ի վերջոյ ժամանակաւոր է, և չը կրեցին: Երկրորդ տարրը մնաց օդի մէջ կախ, բանի որ չունէր իր ոտքի տակ գաղափարական հողը, որն ընդունակ լինէր նրան պահել հասարակական գործունէութեան ու յեղափոխական կոչման բարձրութեան վրայ: Առաջինի բարոյական ոյժը, մտաւոր կորովութիւնը, թարմ կենսունակութիւնը յաղթական էր դուրս եկել փորձութիւնների բովից, շնորհով իր գաղափարական կերպարանքի և իր սօցիալիստական հայեացքների հօրիզոնի լայնութեան ու խորութեան: Իսկ երկրորդը, առհասարակ զուրկ լինելով ամեն գաղափարական հիմքից, իր ամբողջ միտքը, զգացումը և ընթացքը գլորեց մինչև կցկտուր, սահմանափակ ու խառնաշփոթ հասկացողութիւնների և աւանդաբար սնուցած նախապաշարութիւնների մթնոլորտը: Դա յայտնւեց գաղափարապէս լիովին անպատրաստ և անոյժ կանգնելու ընդ-

Հանրապետական հասարակական և մասնավորապես յեղափոխական գործի բարձրութեան վրայ և ընկղմեց բարոյական այլասեռման մէջ, հասաւ մի տխուր անկման: Ահա դա՛ եղաւ նախաշաւիղ ամեն տեսակ տգեղ կրքերի սանձարձակ ըմբոստութեան և կործանարար ընթացքի: Դա եղաւ նշան մի տգէտ պայքարի ընդդէմ մի շարք հիմնական սկզբունքների, և որովհետեւ ոյժերն անհաւասար էին՝ անգաղափարական տարրը, անկարող մրցել ու պայքարել դաղափարական հոգի վրայ, հարցերն իջեցրեց անձնական ու պատիկ ինտերէսների շրջանը և այդպիսով պատճառեց ներքին երկպառակութիւններ: Այդ բոլորի շնորհով, վերջապէս, դուռ բացեց այլանդակ ու յոռի սովորութիւնների և երեւոյթների ներմուծման յեղափոխական շրջաններում, որպէս և մի մոլի անհամբերողութեան դէպէ՛ս ուրիշ գաղափարները: Այդուհետեւ արդէն պարզւել էին այդ երկու տարբեր ու հակառակ դրութիւնները, գաղափարական և անգաղափարական, և նրանց կոչումն այլ ևս անխուսափելի էր: Եւ առաջինը մեկուսացաւ երկրորդից, ինչպէս լեռան գագաթը՝ տափարակից:

Եւ այժմ ինքներդ պատասխանեցէք: Իսկապէս ինչո՞ւն են կայանում, ինչ խոր պատճառներից են առաջացել ա՛յս վերջին մէկ-երկու տարւայ ներքին հակառակութիւնները յեղափոխական յայտնի խմբերի մէջ: Գարձեա՛լ նոյն երկու տարրի ներքին, մտաւոր ու հոգեկան միջնորդի տարբերութեան մէջ. դարձեա՛լ գաղափարականութեան և անգաղափարականութեան նոյն անխուսափելի ընդհարման մէջ. դարձեա՛լ մի կողմից որոշ հասարակական սկզբունքների գոյութեան և միւս կողմից ամեն սկզբունքի բացակայութեան փաստի մէջ: Թէ՛ ինչ տխուր, անհեթեթ, անվայել ու վայրենի ձևերի մէջ է արտայայտուում այդ ընդհարումը, կրկնում եմ, դա չէ՛ կազմում խնդրի էական կողմը: Որքան կուլտուրապէս ցած է կանգնած մէկ ապգոյս, այնքան աւելի տրւում ու բարբարոսական երեւոյթ կառնեն այդ ձևերը, և հայերս, աւա՛ղ, չե՛ր կարող պարծենալ մեր կուլտուրական զարգացման չափով: Վեցդարեան ստրկութեան լուծը, բարբարոս ու կիսավայրենի ժողովրդների հարեւանութիւնն ու միատեղի կենցաղը ներմուծել են մեր մտաւոր ու հոգեկան աշխարհում մի շարք բացասական տգեղ, բարբարոսական այլակերպ հայեացքներ, սովորութիւններ ու բնազդներ: Եւ դա է պատճառը, որ մենք այդ տխուր յատկութիւնները մեզ հետ ենք երբ բերում նաև հասարակական ասպարէզ, որտեղ դրանք կատարում են կործանարար դեր: Դա է պատճառը որ մենք, փոխանակ մեր միտքն ու բարոյականը բարձրացնելու միջև գաղափարի պատւանդանը, ջանք ենք թափում վայր գլորել գաղափարը մինչև այն խաւար միջնորդը, ուր խարխափում ենք մենք: Եւ ահա մեզնից այն ընտիր մասը, գաղափարական տարրը, որ առաջնորդն է հայութեան և որ բարձրացել է մինչև լուսաւոր մտքի աստիճանը, տեսէ՛ք, ինչ հալածանքի, ինչ ոխի ինչ թշնամութեան նշանակէտ է դարձել...

Իմ նպատակը չէ՛ այստեղ մեղադրել այս խմբին և դրւատել այն մէկին: Ժողովրդի առաջ յանցաւոր է նա, ով հասարակական գործունէութիւնը չէ՛ պահպանում գաղափարական բարձրութեան վրայ: Փաստերին մեր տւած լուսաբանութիւնը յանգում է մի տրամաբանական եզրակացութեան, և մեր միակ նպատակն է, որ այդ եզրակացութիւնը իւրացնէ ամեն մէկ անկեղծ յեղափոխա-

կան: Այդ եզրակացութիւնն է հետեւեալը. — ներքին հակառակութիւնների հիմնական պատճառն անձնականութեան և կրքերի մէջ չէ՛ կայանում, այլ գաղափարականութեան և անգաղափարականութեան ընդհարման մէջ. այն իրողութեան մէջ, որ հայ յեղափոխականների մէջ կայ մի տարր, որը մնացել է անգաղափար, անսկզբունք և անծրագիր, և հէնց այդ պատճառով էլ անձնատուր է եղած հակառակութեան բնազդին ընդդէմ այն ամեն զորութեան, որ ներկայանում է իբրև գաղափար և սկզբունք: Այդպիսի մի դառն իրականութեան առաջ իւրաքանչիւր գաղափարական յեղափոխականի կրծքից պէտք է դուրս ժայթքէ մի հզոր աղաղակ, պէտք է այդ աղաղակը կրկնէ՛ հարիւրաւոր արձագանգով և թափանցէ ազգային ու յեղափոխական շրջանների ամենահեռու անկիւնները: Եւ մենք աղաղակում ենք և չենք դադարիլ կրկնել միշտ, որ յեղափոխական ասպարէզը գաղափարական ասպարէզ է և յեղափոխական գործունէութիւնը՝ բնութեամբ առաջացած մի գործունէութիւն: Պէտք չէ՛ երբեք անգիտանալ այդ ճշմարտութիւնը, այդ հասարակական օրէնքը, յեղափոխական գործի այդ իմաստը: Գուրս ելնել անգաղափարականութեան ճահճից, բանալ աչքը գաղափարի լայն ու պայծառ հորիզոնի առաջ, բարձրանալ մինչև յեղափոխականի իսկական կոչումը — և այդ ժամանակ, միայն այդ ժամանակ կրքերը կը դադարեն խաղալ իրանց չարափնաս դերը, կը վերանայ տհաս մտքերի սիստեմական կուրացումը, բարբարոսական բնազդների գրգռումը. այդ ժամանակ միայն կը ջնջեն մեզանում յեղափոխական գաղափարին, գործին ու գործիչին անվայել ու ստորացնող սովորութիւնները, արարքներն ու բարքերը, և ապա կարելի կը լինի անցնել զուտ մտքի հըրապարակը և թի՛ղ այդտեղ քննութիւն լինի գաղափարների, համոզումների, հայեացքների մասին — դա կը բերէ իր մեծ օգուտը, դա անհրաժեշտ է ամեն հասարակական գործում: Ա՛հ, եթէ կարելի լինէր գաղափարի լուսով միանգամայն ցրել նեղ ու տհաս մտքերին տիրող խաւարը. եթէ կարելի լինէր կոյրերին տալ տեսողութիւն և անգաղափարական տարրին վերջապէս նկատի դարձնել գաղափարի արեւը, որ առատութեամբ սրբուում է ամեն կողմ իր պայծառ ու բեղմնաւոր ճառագայթները. եթէ կարելի լինէր Պոսեյդոնոսի այդ կըրակը զնել հէնց նրանց ձեռքը, որոնք այնքան ըմբոստացած են այդ իսկ կրակի դէմ, ճգնելով մարել այն իրանց կրքերի հողմով... բայց ինչ. դեռ թանձր է խաւարն այն տարրի մտքում, որ ինքնախաբ ու վայրենի մի ոգով գրգռւած՝ ջանք է թափում ոտնակոխ անել լուսաւոր խօսքը, միտքը, գործը: Կոյր տարր՝ նա չէ՛ հասկանում, որ իր ընթացքով իսկապէս անհատներին չէ, որ հալածում է, այլ այն գաղափարը, որը կրում են այդ անհատները, այլ և այն մեծ գործը, որի իմաստը, ոյժն ու գրոշակն է այդ գաղափարը: Սակայն, աւա՛ղ, այդ տարրն այնքան խաւարամիտ է և անպատրաստ է բարոյապէս, որ — ինքն իրան երեւակայելով հանգերձ յեղափոխական — չի էլ ըմբռնիլ մեր խօսքերի իմաստը և մեր արտի կակիճը, երբ՝ դիմելով նրա անդամներին, գոչելը. — Զգուշացէ՛ք. դուք մի բարձր լեռան զառիվայրի ստորոտն էք գտնւում, որտեղից չէք նկատում այն արեւը, որ ծագելով՝ իր առաջին լոյսն ուղղում է լեռան գագաթը: Լոյսը, ինչ որ էլ լինի, միշտ յաղմոզ է խաւարի, և երբ նրա իւրաքան-

չիւր շողը, որ, ժամանակի ընթացքում, վերեւից գողգո-
ջուն թրթռումով կը հասնէ ցած՝ մինչև ձեզ և, կամաց
կամաց լուսաւորելով ձեր միտքը, կուզէ իր բայերը
զառիւկարով դէպի վեր — այդ օրից ձեռն այդ աստի-
ճանաբար լուսաւորող մտքում կը սկսէ բացել մի
խոր, մէկ անբուժելի վէրք, վէրք նրանից, որ դուք շա-
րունակ մղիցիք անհեթեթ և կատաղի կռիւ ընդդէմ
գաղափարի և դրան ծառայողներին: Զգուշացէք. պատ-
մութիւնն ունի իր անողոր տրամաբանութիւնը, իր լու-
սամիտ բնութիւնը և իր անկաշառ դատաւճիռը: Նա
չի արդարացնիլ այն, որ յեղափոխական ասպարէզը
դարձրիք հրապարակ ևսական կրքերի. նա չի արդարա-
ցնիլ, որ հալածեցիք գաղափարն ու գաղափարական.
ներին և անգիտացաք սկզբունքների անաշառ ու լուրջ
լուսաբանութիւնները. նա չի արդարացնիլ երբէք մե-
կի անձնական ոխակալութիւնը, միւսի անձնական ամ
բիցիան ու նախանձը, երրորդի կուրուքիւնն ու ան-
կուրութիւնը: Այլ նա, գցելով ձեր գլխին յաւերժա-
կան մոռացութեան պատանը, դրա վրայ կը դրօշմէ իբրև
տապանագիր — «Դուք տգէտ էիք և ծառայեցիք խա-
ւարին, դուք կոյր էիք և կուեցիք լոյսի դէմ, դուք
խուլ էիք և չը լսեցիք ճշմարտութեան ձայնը»:

Եւ դա կը լինի մի դառնալի կտակ հայութեան
ապագային:

ԿՈՎԿԱՍՏԱՆԻ.

ԹԻՌՈՒՅԻԿ ԽՈՂԵՐ

Ընդամենը 15 տարի է, շատ շատ, 16 տարի, ինչ
որ սկսել է յեղափոխութեան կենսատու զովը սփռել
հայրենիքի տխուր և մեղաժողձոտ մթնոլորտում, սակայն
որպիսի փոփոխութիւններ, ինչ պատկառելի ոյժ է ներ-
կայացնում նա. համակրողների որպիսի բազմազան խմ-
բակցութիւններ, լայնածաւալ շրջան և տիրապետու-
թեան ընդարձակ սահմաններ:

Ճիշտ որ, մի տեսակ երազի տպաւորութիւն է թող-
նում հայ նորածիլ և նորաբողբոյ յեղափոխութիւնը
իւր ապստամբական ծրագիրներով, կազմակերպութիւն-
ներով, հաղորդակցութեան բազմապիսի և կարգաւոր-
եալ եղանակներով. վերջապէս՝ որոշ կուսակցութիւն-
ներով, որոնց բոլորի նպատակը հայ ժողովրդի դարա-
ւոր կապանքները, ծանրակուռ շղթան խորտակելն է. այն
ժողովրդի, որ ընդունակ էր քաղաքակրթութեան, լու-
սաւորութեան ևայլն ասպարէզներում հրաշքներ գոր-
ծելու, քաղաքակրթ պետութիւնների հիացմունքին ար-
ժանանալու: Եւ ահա այդ ընդունակ և կենսունակ ժո-
ղովրդը այսօր ծնչուած, իւր մարդկային արժանապատու-
թեան ամենանուիրական զգացմունքները մի արհամարհելի,
բռնկալ տիրապետի ոտքերի տակ դրած՝ մի ազատ
վայրկեան է որոճում, որպէս զի, վերջիվերջոյ, ջախջա-
խելով բռնութեան ծանր կապանքները, պատառէ խա-
ւարի թանձր վարդոյրը և քաղաքական ու տնտեսա-
կան Անկախութեան կենարար զովը ներշնչէ:

Տասն և հինգ տարի... Չնչին, ծիծաղելի ժամա-
նակաշրջան որ և է ազգի բարոյական, քաղաքական

և մտաւոր հասունութեան. մի ամենակարճ ժամանակա-
միջոց, որի ընթացքում կարող է մի որ և է ազգ բա-
ղաքական և տնտեսական վերածնութիւն, ազատութիւն
ձեռք բերել, սակայն ոչ որ չէ կարող ուրանալ, որ հայ
յեղափոխութիւնը իւր անխուսափելի սխալներով, թիւ-
րիմացութիւններով հանդերձ՝ բաւականին գործ է
կատարել:

Ի նկատի ունեցէք, որ մենք Ազգային Ազատագ-
րութեան, նշնպէս և սօցիալական ազատութեան դրա-
մայի, եթէ ներելի կը լինի մեզ այսպէս արտայայտել,
նախերգանքի մէջ ենք գտնուում, բուն գործողութիւն-
ները յետոյ են գալու... Գաղափարի յաղթանակը, վեր-
ջին գործողութեան բերկրառիթ հնչակը յետոյ է զօ-
ղանջելու...:

Ճիշտ որ այսպէս է: Իրաւ է որ, վերջապէս, «գալու
է մի օր, ժամանակ, տեսնել Մասիսի գլխին մի դրօշակ»
Իրաւ է, որ մենք դեռ կենդանի, բաղդ կունենանք ար-
ժանանալու այն երանաւէտ րոպէին, երբ, որպէս ա-
սում է մի օտարուհի, հայուհուց աւելի խանդավառ
ոգևորութեամբ և անկեղծ հոգեզմայլութեամբ, այս
թշուառ, տառապեալ ժողովրդի համար կը ծագէ վար-
դակարմիր, յուսատու արշալոյս... Դեռ հեռու չէ այն
օրը, երբ ծիծաղում էին յեղափոխականների վրայ.
Ծիծաղելը քիչ է, ծաղրում, արհամարհում էին՝ «ջահէ
ջնուլ» անուանելով. դեռահաս պատանիներ, որոնք, ե-
րբէք, արեան առատութիւնից, «հայ հուլ» անելով, հա-
րայ հրոց սարքելով, գլուխ էին ցաւեցնում իրենց ան-
միտ աղմուկներով ու աղաղակներով, թէ ի՞նչ է, ազգ
են ուզում փրկել, հայրենիք ազատել: Խեղաբարներ,
բոշ մարդիկ են, մոմտում էին ուրիշի խելքի և ուղ-
ղութեան մատեմատիքօրէն չափ հասանդները:

Այս տեսակ մտածողները ոչ միայն միջնադար-
եան խելքի և հասկացողութեան տէր հաստափոր վա-
ճառականներ, պետութեան հրամանները ստիկօրէն կա-
տարող ողորմելի պաշտօնեաներ էին, ոչ միայն խուճկ
ու մոմի և աղօթքների մէջ իրենց կեանքի խարխուլ
մնացորդներն անցկացնող թշուառական ճգնաւորներ,
միայնակեաց անապատականներ, այլ և մեր կրթուած
գասի՝ իրեն ծաղիկ համարող մասը, հայ կրթուած, մը-
տաւոր բուրժուազիայի ստուար մեծամասնութիւնը, ան-
մահ գործիչների, բանտերում թոքերը փչացնող անզու-
գական հրապարակախօսների անարժան, «տաղանդաւոր»
սրկիայ յետնորդներն ու սրանց խելկատակ, իդիօտ կա-
մակատարները, որոնք լէգալ մամուլի ապականած էջերում
շարունակում են իրենց շահատակութիւնները, մթին ան-
կիւններում լուսահաջ տալիս յեղափոխութեան վրայ...

Մեզ պատահել է շատ անկեղծ, պատրաստու-
թեան տէր հայ երիտասարդներ տեսնել, որոնք հու-
մորիստական ամենափայլուն դարձուածներով ծաղրել
են Հայ Եղափոխութիւնը. յեղափոխականներին և, առ-
հասարակ, հայ երիտասարդութեան այն մասին, որը,
եթէ կարելի է այսպէս ասել, իբրև կոչում, նուիրել
է իրեն այն ասպարէզին, որի բարձր նպատակները,
սրբազան նշանաբանը վեր և անմերձեանալի պիտի լինեն
ամեն մի վեր կացող ստամբակի ծաղրից ու քամահ-
րանքից... Այն աստիճանի էր հասցրել այդ մտաւոր
բուրժուա ասուած դասակարգը, որ, ըստ երգիծաբանի
սուր արտայայտութեան, քիչ էր մնում յեղափոխա-
կանի մասին խօսելիս առանձին ներողութիւն խնդրէր

ունենալից կամ ընթերցողից, նրան տհաճութիւն չը պատճառելու համար:

Մի՞թէ իսկապէս այդպէս պիտի լինի, պիտի շարունակուի դեռ ևս այն ծաղրը և քամահրանքը, որ գոյութիւն է ունեցել, այն մեղեցիկն անտարբերութիւնը, որ թագաւորութեան է մեր ուսանողութեան, մեր ամենաթարմ երիտասարդութեան մէջ: Թողնելով մի կողմը ուսանողութեան այն մասը, որ կամ դէմ է յեղափոխութեան, կամ լոկ պլատոնական զգացմունքներով է համակուած դէպի յեղափոխութիւնը — որի մասին մի ուրիշ անգամ առիթ կունենանք խօսելու — վերջը նենք հէնց այն երիտասարդութիւնը, որը իրեն հայ հասարակութեան ղեկավար կարծելու և համարելու յաւակնութիւնն ունի, որ ստանձնել է թէ գրական և թէ հասարակական ասպարէզները, որ հասարակութեան մտքին և զգացմունքին ուղղութիւն տուող է երեւակայել իրեն, շատ անգամ իւր ծաղրը լիտիութեան է հասցրել, բայց երբեք չէ պատահել, որ նա իւր քամահրանքը պատճառաբանէր լուրջ, հիմնաւոր առարկութիւններով: Բայց, եթէ դաւանում է որ և է սկզբունք, եթէ անհրեակայելի է համարում յեղափոխութեամբ ցածկահայտատանում մի ապահով ապագայ, մի ազատ և անկաս աշխարհ ստեղծելու, այդ ցոյց տաւ, կամ փորձէր ցոյց տալու, փաստելով, առարկութիւններով, հիմնաւոր արգումենտացիոններով, պատմական ջանքերից ու անհիշելի փաստերով: Ցոյց տաւ, վերջապէս, եթէ կարող էր, կամ քաջութիւն կունենար այդ բանն ապացոյցանելու, որ հայ յեղափոխութեան ձգտումները, կէտ նպատակը մի ուստոպիա են, մի հրաշալի ցնորք, որ բոլորովն ուղիղների մէջ միայն գոյութիւն ունին, որ նրա՞ք հակառակ են առողջ մտածողութեան, հակառակ են պատմութեան ընթացքին և նրա օրէ՞քներին: Թող համոզէր նա հայ յեղափոխականին, որքան ներում են իւր համոզելու սահմանները, տեղը, հանգամանքները, թէ գրով և թէ խօսքով: Եւ այն ժամանկ, գուցէ, այդ «տաքագրութիւն» հայ ուսողները, հայ «ազգասէրներ», հայրենասէրներն՝ ընդհանրապէս, աւելի ձիշտն ասած՝ յեղափոխականները՝ խոնարհուելով, ընկճուելով նրա բերած ջանքերից փաստերի ծանրութեան տակ, ձեռքները կը ծալէին, մի կողմը կը դնէին իրենց «գէնք ու զրահը» և, վերջապէս, կը փակէին իրենց Geschäft-ները՝ այլևս չբանալու անշեղ դիտաւորութեամբ:

Սակայն այսպէս չէ եղել երբեք: Կամ, եթէ եղել է արտասահմանում, գրականութեան մէջ, այդ էլ միմիայն կամ դատարկ ենթադրութիւններ, ակումբներ, կամ անարգ հայհոյանքներ, յիշողներ, Արդիւլ Համիդին խնկարկութիւններ այն մտաւոր պոռնիկների կողմից, որոնք, պարբերաբար, զանազան գոյներ են փոխում, բամբակոնի նման, ամենաթուր և կատաղի յեղափոխական ձեւանալով մինչև անգամ, ձիշտ՝ բանաստեղծի ասածի պէս. «Տեղը եկաւ Հայ է նա, տեղը եկաւ այլազգի, իւրօր ոչ այս է, ոչ էլ այն է, այլ ծնունդ մի նոր ազգի»: Կամ, գոնէ մեր կողմերը, շատ անորոշ յարձակմունքներ, առանց որ և է հիմքի, իրենք էլ չիմանալով թէ ինչ՞ են դէմ, կամ ինչի՞ համար են ծաղրում. իբրև պարապ ժամանակի զբօսանք, «տակ սեբէ», ինչպէս ասում են ուսնները:

Տարօրինակ բան է, նրանց կարծիքով, որ երբ և է տոկուն աշխատանքով, յարատե գոր-

ծունէութեամբ յանկարծ մի նոր վերածնութեան կենարար արշալոյս ծագէ հայ հինաւուրց հորիզոնից... Միւնչդեռ, եթէ խնդիրը բնութէր լուրջ կերպով, առանց ծաղրի և հեգնութեան ամօթալի սահմանները մտնելու, այն ժամանակ որքան կը պարզուէր, որքան կը լուսաբանուէր ընթերցողի կամ ունկնդրի համար, որը գործին աւելի գիտակցօրէն կը նայէր անտարակոյս: Այս փորձը շատ քիչ է արւում, մինչդեռ սա ամենաանհրաժեշտն է: Մի բանի երկիրներում կատարւում է, սակայն բոլորովն այլ կերպարանքով և եղանակով, աւելի լուսաբանութեան, շօշափուած հարցը պարզաբանելու նպատակով, եթէ համոզուած չեն, քան հակառակելու, ընդդիմաբանելու դիտաւորութեամբ: Բանը «կը մարմնանայ» և ընդունողի լիւրջ սեպհականութիւնը կը դառնայ լուրջ վերաբերմունքով, յաճախի և պարբերական թեր և դէմ վիճաբանութիւններով, զօրեղ պաշտպանողական և հիմնաւոր, թանձրացեալ օրինակներով:

Այսպէս թէ այնպէս, յեղափոխութեան թշնամիներ, կամ նրան չհամակրողներ են, սկսած հոգեւորականից, բուրժուայից՝ «բարձր շրջան» կուռած մեղկացած դատարարներից և չաղ պաշտօններ և ուրիշ շատ հրաշալի «յարմարութիւններ» սիրող երիտասարդութեամբ վերջացրած:

Մենք յեղափոխութեան անուղղակի թշնամի կը համարենք նաև նրանց, որոնք չէղօք, անտարբեր, զարմանալի անկրութեան վիճակի ենթարկուած՝ չեն մտածել, կամ ժամանակ չեն ունեցել յեղափոխութեան մասին մտածելու, աւելի «լուրջ» և «կենսագրիկ խնդիրներով» զբաղուած լինելով: Այսպէս մտածողներին ոչ թափօցրեց Զէյթունի հերոսական պատերազմը և կիսաանկաս Հայ Մոնտենէգրոյի ազատութեան այդ վսեմ և վիհ գուսաներգութեան հրաշալի նախերգանքը, ոչ էլ Սասունի քստմնելի եղերերգութիւնը: Տխուր և անմխիթարական տպաւորութիւն չթողից այդպիսիների վրայ նաև յեղափոխական վերոյիշեալ նախերգանքներից յետոյ իւր թանձր վարագոյրները ներքև ձգած՝ հակաշրջումն. ուսակցիոնը, որ սքօղեց յեղափոխութեան սահմանները և նրա հակայական խայտերի առաջ անխորտակելի պատնէշներ դնելու յանդիմութիւնն ունեցաւ: Այո, չաղքեցին նրա վրայ այս բոլորը՝ Հարկաւոր էր մի զօրեղ հոսանք, մի ուժգին հանգամանք, որ սովորական պրոպագանդայի հետ զուգընթաց, ժամանակի ոգու և տրամադրութեան հետ ձեռք ձեռքի տուած՝ յեղափոխութիւնը նորանոր նուաճումներ և աշխարհաւորութիւններ անէր...

Ու այդ հոսանքը ակնհայտ էր իւր ալիքները, մարկածուի կոհակները վեր բարձրացնել, դիտողը նայում և սքանչանում էր ծովի ալիքերի շքեղ գալարումներով: Մահացողից հակաշրջումը, ուսակցիոնը, վեց տարի ժողովրդի մտքերը, զգացմունքները և հոգին ընդարձակեց, բթացնելուց յետոյ՝ խորտակուել էր... Չէղօք և անկար, ապաօրային ենթարկուածները, կարծէք, վերջապէս զգացել էին իրենց յանցանքը և յեղափոխութեան կամաւոր զինուորներ գրում... Մուսլ ամպերը չքցել էին իրենց խոստացող սպառնալիքներով... Միացել էին յեղափոխութեան ասպարիզում երբեմն զինակից, «եղբայրակից» բանակներ... Այս պատահական երևոյթը աւելի քան նպաստաւոր, ոգեւոր-

րիչ և խրախուսական էր նոյն ինքն չէզոքների և անտարբերների համար... Այսօր յեղափոխութեան զարկերակը աւելի քան երբեք հզօր էր զարկում... Ժողովրդի տրամադրութեան և համակրութեան, ոգևորութեան ու խանդավառութեան չափ ու սահման չկար...

(Հարստեանկելի)

Ս. ՏԱՇԻՐ.

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՐՑԸ

ԵՒ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

Անհերքելի է, որ ամեն-մի խնդր՝ մարդկային իրաւունքին և ազատութեան վերաբերող՝ անմիջապէս արծագանգ է գտնում եւրոպական սօցիալիստական շարքերում, որքան էլ աշխարհիս հեռավոր անկիւններում ծագէր այդ խնդիրը։ Եւ դա բնական է, քանի որ սօցիալիստական գաղափարն ընդգրկում է հանրամարդկային ամբողջ կենցաղը՝ դրա ամեն երևոյթներով։ Ըստ ինքեան սօցիալիզմն իւր գաղափարում ամփոփում է ոչ միայն այս կամ այն ազգի, այլ և ամբողջ քաղաքակիրթ մարդկութեան կենցաղի պատմական զարգացման գիտական մեկնութիւնը, որպէս և նրա ժամանակակից առաջնութեանը, և որոշում է այն ապագայ դերութիւնը, դէպի ուր տանում է ներկայ կենցաղի զարգացումը։ Եւ այդ ապագան է արդարաւայել, ազատ, հաւասար դրութիւն ամեն մարդկանց և ամեն հասարակութիւնների մէջ։ Այդպէս լինելով նրա գաղափարական հիմքը, պարզ է, որ ամեն երևոյթ, թէ՛ մասնաւոր և թէ՛ հասարակական, որը երևան է գալիս իբրև ձգտումն դէպի կեանքի պայմանների ազատութիւն և արդարութիւն, պէտք է գտնէ սօցիալիստական շարքերում իր հզօր, անկաշառ ու բարձր ակոյեանները։

Մինչև այժմ մարդկութեան պատմութեան մէջ երբեք եղած չէ այնպիսի մի հասարակական տարր, որն ունենար մտքերի ու հայեացքների այն լայնութիւնը և զգալու ընդունակութեան այն խորութիւնը, ինչ որ ունի սօցիալիստական տարրն իր ծագումից ի վեր, որ տեղի ունեցաւ անցեալ դարում։ Այդպիսի մի տարր չէր էլ կարող գոյութիւն ունենալ մինչև 19-րդ դարը, որովհետև մարդկային ընդհանուր կենցաղի պայմաններն այն կերպի և հիմքի չէին, որ իրանց ծոցում ստեղծէին այդպիսի մի տարր։ Մարդկութեան այդ ամենալուսամիտ տարրը ծագեց և առաջացաւ այն ժամանակ, երբ բուրժուազական, կապիտալիստական տարրը, դասակարգը, վերջնականապէս հաստատեց աշխարհում իր տնտեսական ու քաղաքական տիրապետութիւնը միւս բոլոր դասակարգի վրայ, մարդկութեան վրայ։ Բուրժուազիայի այդ տիրապետութիւնից առաջացած կեանքի նոր պայ-

մաններն էլ ծնունդ տւին սօցիալիզմին։ Եւ ինչպէս բուրժուազական կեանքի ձևերը, ուրեմն գաղափարները, անհամեմատ աւելի լայն ու զարգացած են, քան նախորդ՝ հին նահապետական և ապա աւատական կեանքի պայմանները, նոյնպէս էլ սօցիալիզմը, ստեղծելով բուրժուազական դրութիւնից, իր կենսական - հասարակական իդէալով ու գաղափարներով հանդիսանում է ևս աւելի, անհամեմատ աւելի բարձր, լայն ու զարգացած քան բուրժուազականը։ Դա բաւական չէ. սօցիալիզմը առաջացնում է կեանքի նոր ձևեր, որոնք հիմնւած են ընդհանուր ազատութեան և ընդհանուր բարեկեց հաւասարութեան վրայ, և գրանով նա հիմնովին հերքող է հանդիսանում բուրժուազական ներկայ կարգերի, որոնք հիմնւած են անարդարութեան և անհաւասարութեան վրայ։ Եւ ահա ինչու միակ սօցիալիստներն են, որ յայտնում են մարդկութեան բարօրութեան գաղափարի, արդար, ազատ ու վսեմ հաւացների և մարդկային առաջնութեան պահանջների կրողներ և արտայայտիչներ։

Հէնց շնորհով սօցիալիզմի այդ գաղափարի, որ ազատագրութիւնն է ամբողջ մարդկութեան, սօցիալիստներն էլ բնական կերպով իրանց միտքն ու գործունէութիւնն ընդլայնել են շատ աւելի ընդարձակ կերպով, քան մինչև այժմ պատմութեան մէջ եղած բոլոր այլ հասարակական տարրերը։ Իրանց միտքն ու գործունէութիւնը սօցիալիստները ծաւալել են նաև ազգային սահմաններից դուրս՝ մինչև ամեն ազգերի և ամբողջ մարդկութեան կենցաղի սահմանները։ Այդ պատճառով էլ նրանք յայտնում միջազգայնականներ, ինտերնացիօնալիստներ։ Նրանք յայտարարող են ազգերի եղբայրութեան և համահասարակ անսահման ազատութեան, և այդ մեծ իդէալի համար նրանցից իւրաքանչիւրն աշխատում ու գործում է այն ազգի մէջ կամ այն երկրում, որին նա պատկանում է ծննդեամբ կամ կենսական կապով։ Նրանց փիլիսոփայական գաղափարը և մարդկային հանրակացութեան մասին գիտականապէս նրանց կազմած իդէալը, այդպիսով, յայտնւում է հանրամարդկային, միաժամանակ բոլոր ազգերի նկատմամբ, որպէս և իւրաքանչիւր ազգի համար առանձնապէս։ Ֆրանսիական Մեծ Գեղափոխութեան փողով հռչակած իր գաղափարով բուրժուազական, դառնալով տէր աշխարհի, հանդիսացաւ մէկ ընդարձակ ծով, որ իր մէջ ընկղմեց նախկին նահապետական կեանքի լճակներ և աւատական կեանքի լճեր, և առաջ բերաւ ու կազմակերպեց մեծ ազգութիւններ իրանց լայն նորատեսակ հանրակացութեամբ։ Սօցիալիզմն իր գաղափարով յայտնում է ահագին ուժիկանոս, որ մէջ կառնէ բուրժուազական ծովեր և առաջ կը բերէ ու կը կազմակերպէ մէկ և ընդհանուր մեծ մարդկութիւն՝ իր նոր ապագայ լայնածաւալ, հզօր և ինքնատէր հանրակացութեամբ։ Եւ գրանումն է ահա սօցիալիզմի ամբողջ համաշխարհային նշանակութիւնն ու վսեմութիւնը։

Առաջնորդւելով իրանց այդ իդէալով, սօցիալիստները գիտեն, որ ընդհանուր մարդկութեան ազատա-

գրքութեան ու բարօրութեան հասնելու հիմնական մի պայմանն է, որ ամեն ազգ, ամեն ժողովուրդ, որքան էլ մեծ կ'... որքան էլ փոքր լինեն նրանք, պէտք է փրկւեն այն բոլոր կաշկանդներից, որոնք արգելք են այսօր նրանց ազգային զարգացման և առաջդիմութեան:

Այդ պատճառով էլ սօցիալիստները յայտնում են վճռական խնդիրներ այլ և այլ բռնութեան տակ ճնշւած ժողովրդների ազատութեան և մարդկային ու բազմազան իրաւունքների տէր դառնալուն: Նրանք գիտեն, որ սօցիալիզմի վերջնական յաղթանակի համար անհրաժեշտ է ազգայնական խնդրի լուծումը, որով կը ստեղծեն նպաստաւոր պայմաններ ամեն, մեծ ու փոքր, ազգերի ազատ զարգացման համար: Այդ պատճառով էլ սօցիալիստներն, ընդհանուր առմամբ, սկզբից ի վեր յայտնեցան հայ ժողովրդի, որպէս Մակեդոնիայի, խնդիրների պաշտպաններ: Եւ տեսնելով, որ այդ պաշտպանութիւնը ձեւական երգ չէ մարդասիրութեան բռնարի ամեն լարերի վրայ, այլ մի դիրք, որ թելադրած է նոյն իսկ սօցիալիստական իդէալով և մարդկութեան մէջ այդ իդէալի իրագործման համար ուղի բանալու հոգսով: Եւ դա մի շատ աւելի խորին հայեացք է և շատ աւելի մեծ գրաւական սօցիալիստների ճշմարիտ ազատասիրութեան ու մարդասիրութեան, բան բուրժուազական ու կղերական մի յայտնի մամուլի ծանրակշիռ յարձակումներն ու քրիստոնէական անէծքներն ընդդէմ Թիւրքիայի:

Արդարեւ, մինչդեռ Քրիստիանի սօցիալիստական մամուլը միշտ միևնոյն հայեցակէտի վրայ կանգնած, շարունակ պաշտպանում է ճնշւած ժողովրդներին և պահանջում հայկական ու մակեդոնական խնդիրների վրձնական ու հիմնական լուծումը, Քրիստիական բուրժուազական ու կղերական մամուլը քամէլիոնի պէս տարբեր գոյներով է ներկում: Բուրժուազիան գիտէ ազատել կամ ազատել տալ այս կամ այն ճնշւած ազգին, բայց... բայց միայն այն ժամանակ, երբ դա ձեռնտու է իր կապիտալիստական, ֆինանսական շահերին և աշխարհակալական ձեռնարկներին: Եւ եւրոպական բուրժուազական տէրութիւնները, Թիւրքիան ունենալով իրենց մէջ իբրեւ կռածադիկ իրանց կապիտալիստական ձգտումների պատճառով թող են աւելի ճնշւած ազգերին կոտորել: Այդ չէ խանգարում սակայն, որ նրանց հաստակազմ մամուլը ժամանակ առ ժամանակ մարդասիրական ճիշդ արձակէ, նշաւակելով Մեծ Մարդասպանին: Բայց բաւական է, որ բուրժուազական կառավարութեան արտաքին գործերի մի միսիստր բարձրացնէ իր մատը, և հաստափոր մամուլն անմիջապէս լուում է և կամ այնպէս հարցերի լուծման առաջ ամեն կերպ ծանծուծ: «Բայց... սակայն... եթէ... գուցէ...» և այլ նոյնօրինակ խուսափողական ու սփեքտական ոճեր: Բուրժուազական մամուլը ցնցում ու սարսափում է ոչ այնքան կոտորածներից, որքան, և գլխաւորաբար, եւրոպական տէրութիւնների հակառակութիւններից Թիւրքիայի նկատմամբ և այդ հակառակութիւնների հաւանական ար-

դիւնք՝ որ և է միջազգային ընդհարումից: Եւ այն րօպէներին, երբ այդպիսի բարդութիւններով յղի է համարում Արեւելեան հարցը, նա սկսում է պահանջել դրա լուծումը... և հէնց այդ ժամանակն է միայն որ սկսում է նաեւ ազգել իր մարդասիրական դարձած սրտի լարերի վրայ: Բայց երբ դիպրոմատիան նորից աղողում է ոչ թէ լուծել, այլ քնացնել չարաբաստիկ հարցը, նոյն մամուլը, տեսնելով որ ֆինանսական բուրժուազիայի շահերը Թիւրքիայում դեռ մնում են անվտանգ, անձեռնմխելի ու սուրբ, իբրեւ պաշտաման ոսկէ հորթ, կամաց-կամաց մոռալով՝ կրկին տալ է անում ու լուում... Իսկ կոտորածները — այժմ Մակեդոնիայում — շարունակում են... Բուրժուազական ընչաբաղցու-թիւնն ու շահասիրութիւնն այդպիսով իր մամուլին ըստիպում է խաղալ վարանող դեր Թիւրքական լծի տակ հեծող ազգերի ազատագրութեան իրագործման հարցում: Եթէ այստեղ մենք մատնանիշ ենք անում մասնաւորապէս Քրիստիական բուրժուազական մամուլի վրայ, նոյն երևոյթը և նոյն ընթացքը կարող ենք, ընդհանուր առմամբ, նկատել եւրոպական նաեւ միւս երկիրների նոյն կարգի մամուլի մէջ:

Քրիստիական կղերական մամուլին շատ «սաղ էր գալիս» մահմեդական Թիւրքիայի գլխին կարգալ բըրխտօնէական աւետարաններ: Արեւելեան խնդիրն այդ մամուլը շինեց իր ձեռքին կղերական շահագիտականութեան մի գործիք, և դա՛ կրկնակի կերպով: Հայ և Մակեդոնական խնդիրները նա դարձրեց քրիստոնէական խնդիր և տեւց նրանց կրօնական գոյն: Թիւրքիան հաւածում է հայերին, մակեդոնացիներին, ասում է նա, որովհետեւ նրանք քրիստոնեայ ժողովրդներ են: Այդ աւելի բան միակողմանի, նեղահայեաց ու կողմնակալ մեկնութիւնն այնպիսի մի հարցի, որի ծագման հիմքը տեւտեսական ու բաղաբան է, միայն կարող էր շփոթել եւրոպական հասարակաց ազատասէր կարծիքը՝ մի կողմից և միւս կողմից գրգռել մահմեդական ֆանատիկոսութիւնն ընդդէմ զոհ դարձած ազգերի: Ապա նոյն մամուլն Արեւելեան հարցը գործ է ածում իբրեւ յարձակումների մի նիւթ Քրիստիական Հանրապետութեան դէմ, որի անկման ջերմեռանդ տենչող է:

Վերջին եօթ-ութ տարւայ ընթացքում Քրիստիական սօցիալիստական մամուլը, ամեն պատեհութեան, ջատագով է հանդիսացել հայկական խնդրի և, առհասարակ, Արեւելեան հարցի լուծման: Այդ մամուլի տեսակէտից Արեւելեան հարցի հիմքն է տնտեսական ու վարչական, մի սպանիչ դրութիւն, որի բարեկարգութեան համար անհրաժեշտ է ճնշւած ազգերի հասարակական կեանքի բարեկարգութիւնը բաղաբան ու մարդկային ազատ իրաւունքների սկզբունքների համաձայն: Եւ այսօր էլ նա եւրոպական դիպրոմատիայից հէնց այդ պահանջն է անում, ցոյց տալով դրա համար իբրեւ միջոց, փոխարէն դիպրոմատական ձեւակերպութիւնների կատակախաղութեան, նաւային ցոյցեր Թիւրքիայի դէմ և ապա նոյն իսկ եւրոպայի մշտական վերահսկողութեան ներքոյ՝

երկրի դրուժեան բաղաբական, վարչական ու տնտեսական վերակազմութիւն: Սօցիալիստական մամուլը ֆրանսիայում սկզբից ի վեր այդպէս է գրել հարցը և նոյն կերպ պաշտպանում է նրան նաև այսօր:

Այդ ամենն ասելով հանդերձ, չէ կարելի ուրանալ այն փաստը, որ բուրժուազական մամուլի ամենաառաջագէմ, արմատական կոչւած մասը ֆրանսիայում նոյնպէս, նման սօցիալիստների, պահանջող է հայկական և մակեդոնական հարցերի կանոնաւոր և արագ լուծման: Այդ ընթացքը մասամբ արդիւնք է այն հանգամանքի, որ ֆրանսիական հանրապետական արմատական տարրը ներկայացուցիչը չէ խոշոր ֆինանսիստների ու կապիտալիստների շահերի, մասամբ էլ նրանից, որ նրա բաղաբական հայեացքները շատ աւելի լայն են, ուրեմն և աւելի համապատասխան մարդկութեան առաջագիտութեան ձգտումների և արդարութեան պահանջների: Անհրաժեշտ է, սակայն, որ արմատական մամուլի այդ նպաստաւոր ընթացքի վրայ մեծ ազդեցութիւն է գործում նաև ֆրանսիական ընդհանուր հասարակական կարծիքը, ֆրանսիական ժողովրդի խիստ զայրոյթը Թուրքիայի դէմ: Այդ կարծիքը, պէտք է ասել, մեծ ճնշում է գործում նայն իսկ բուրժուազական ու կղերական մամուլի վրայ, և այդ ազդեցութիւնը տարածւում է մինչև կառավարութեան վրայ, որն իրան ստիպւած է տեսնում իր արեւելեան բաղաբականութեան մասին պարբերաբար հաշիւ տալ հասարակութեան: Եթէ այդ հասարակաց կարծիքը շարունակէ աւելի ևս զարգանալ, կառավարութիւնը մէկ օր, անշուշտ, հարկադրւած պիտի լինի ոչ միայն հաշիւ տալ, այլ և ջանալ կատարել այդ կարծիքի պահանջը:

Ֆրանսիայում, Արեւելեան հարցի նկատմամբ, այդ հասարակաց կարծիքի արտայայտիչներն են սօցիալիստական մամուլը և իսանք սօցիալիստները և միանգամայն հէնց այս վերջիներն են, որ աջողիցան արթնացնել այդ կարծիքը, և շարունակ պահում են նրան արթուն և լուսաւորում նրա խիղճն իրանց հմուտ ու բարձր խօսքով, իրանց աճող ազդեցութեամբ և իրանց անվեհեր ու հզօր գործունէութեամբ:

Ա. Լ.

ՄԻ ՆՈՐ ԹԵՐԹ

Միացեալ Նահանգների Շիկագո քաղաքում անգլիերէն լեզուով վերջերս սկսել է հրատարակել մի նոր քերթ, «The Struggle» for Liberty of Armenia & Macedonia. (Ջանքը, Հայաստանի և Մակեդոնիոյ ազատութեան համար)

Struggle ի առաջին քառուսյակը որոշ չի ընդգծած իր նպատակը, քայքայ քովանդակութեան երևում է, որ հրատարակիչները ցանկանում են ծանօթացնել երկու կենսական, քաղաքակրթութեան ընդունակ ժողովրդների անցեալ պատմութեան՝ մասնաւորապէս Բեռլինի դաշնադրութեան յետոյ՝ քաղաք կառավարութեան կողմից կրած տառապանքների հետ, նորագոյն քաղաքի փաստերի և կա-

տարած իրողութիւնների վրայ հիմնած:

Թերթի հրատարակիչները խոստանում են երկու ժողովրդների վրայ կատարող համապատասխան քաղաքական արարքները՝ ականատեսների թղթակցութիւնների հրատարակութեամբ, դնել Մ. Նահանգների ժողովրդի առաջ: Մ. Նահանգների ամենօրեայ քերթերը՝ չհետաքրքրելով Արեւելեան հարցով՝ շատ չնչին շտապեր են պարունակում քրքական ներքին գործերի և իւր զրիստոնեայ հրատարակների մասին:

Struggle-ը ոչ միայն պիտի ջանայ հայերի և մակեդոնացիների կրած տանջանքները ներկայացնել իր ընթերցողներին, նրանց գոչել շարժելու, այլ և պիտի ցոյց տայ նրանց քաջամեջ վերջին հերոսական ձիգերը իրենց ազատութեան համար, և հասարակաց կարծիքը ստեղծել յօգուտ երկու քաղաքաշար զրիստոնեայ ժողովրդների:

Սրտանց յաջողութիւն ենք ցանկանում հատարակիչների համակրելի ճեղքարկին:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՐՑԻ ԺՈՒՐԶԸ

Մակեդոնական ու Բուլղարական լեռները զրկւելիքն իրենց սպիտակափառ ծածկոյթներից — ինչպէս նախագուշակուած էր մեր անցեալ յօդուածում — և Մակեդոնական հարցը առաջ նետուեց սպառնալից կերպարանքով և բարձրագոյն կամակորութեամբ: Թող Գուլլուխիները և իրենց արժանաւոր գաշնակից լաւաւ գործները՝ Ելզդրի ճարպիկ ձեռնածուի խօսքերին դիտմամբ հաւատալով՝ ուէֆօրմների ծրագիրներով քննարկել կամենան հարստահարուած ժողովուրդներին, և, որպէս և միշտ, միմիայն իրենց Մեծերի գերագոյն գրծուծ շահերն աչքի առաջ ունենան, սակայն Մակեդոնական հերոսական ժողովուրդը, արդէն ընդլուծմի կարմրափայլ դրօշը բարձրացրած, թնդանթի որոտմամբ և հրացանի պայթիւններով է վճռել իւր դաւաճուր բռնաբարուած ամենանախնական և անկորնչելի իրաւունքները վերականգնել:

Ներկայ համարում տպագրուած լուրերից ընթերցողն արդէն եզրակացնում է իրերի դրուժեւնը Բալքանեան թերակղզու վրայ: Խոհեմ բաղաբականութեան ջերմ սիրահարները, աղերսագիրների և ուէֆօրմների ջրմագին ջատագովները այլևս անգոր են առաջն առնելու այն բուռն և կատաղի դիմադրութեան, որ որոշել են ցոյց տալ մինչև իրենց արժան վերջին կաթիլը Սարաֆոֆները և նրանց արժանաւոր գործակիցները, հայրենիքի սրտի մէջ, բարձրաբերձ լեռների կատարներին, արիւնախանձ թշնամու գլխին գնդակի տարափ տեղալով:

Մեծ Մարդասպանը և իւր սրտակից բարեկամները, տեսնելով որ դարաւոր ճնշուած ժողովուրդը կատակի համար չէ զէնքը ձեռքն առել, իսկոյն ուէֆօրմների աչքակապութիւնները և օյինբազութիւնները մէջ ձգեցին, աւելի ազատ և համարձակ իրենց վայրագութիւններն առաջ մղելու դիտաւորութեամբ. բայց հրնացել է այս ծամծամ ու Սուլթան Համիդի ամենա-

սիրելի մեծագույն Մակեդոնացիներ՝ օգտուելով պատմութեան խրատական դասերից՝ չի հաւատալ խարդախ որոգայթներին:

Ինչ է լինելու, սակայն, դրութիւնը: Արդեօք վախճանի ակզբում ենք կանգնած: Արդեօք վաղուցհետեւ սպասուած և յուսացած պատերազմը, որի արիքները ներկայումս տարածուել և սփռուել են Մակեդոնիայի խորքերը, ազատելու, փրկելու է անհաւասար կռուի մէջ նետուած փոքրամիւս ժողովուրդին: Վերջապէս, Արեւելեան չարաբաստիկ հարցը, որը Եւրոպական բազմազգաւոր դիւանագէտների որկորում առանց կուլ գնալու մնացել է իբրեւ մի հաստաբետ ոսկոր, լուծուի՞նք է ստանալու, բարեյաջող վախճան է ստանալու արդեօք, դժուար է, առ այժմ, հաստատապէս որոշել:

Եւրոպական Մեծ Պետութիւնները, եւրոպական այս Մեծ Միջնորդները, շարունակ պնդում են 1878 թ. Բեռլինի կոնգրէսում խոստացուած ռէֆորմների իրագործման վրայ—Մակեդոնիայում և Ալբանիայում: Գո. մովագութ Սուլթանն արդէն կամենում է զէնքի զօրութեամբ իւր բարի ցանկութիւնները՝ պատահաբար մուսուլման խոստումներն իրագործել, բայց ո՞վ է հաւատում նրա պարապ խօսքերին, որ Մակեդոնացիք կամ նոյն իսկ, Ալբանացիք հաւատան:

Անդրիսագրութիւնը սոսկալի է: Վերջին օրերի դէպքերը բաւականաչափ պարզում են այս ընդդիմութիւնը և նրա անմիջական հետեւանքները: Հէնց որ լուր եկաւ թէ ռէֆորմները պիտի իրագործուին, այսինքն միամիտների աչքերին թող պիտի փչէ Ելզըզի ճարպիկ ձեռնածուռ, հէնց որ լուր եկաւ, թէ Ռուսաստանն առանձին հիւպատոսարան է հաստատում Միտրովիցայում, ի հարկէ, քրիստոնեաներին պաշտպանելու բազմազգ դիտաւորութեամբ և տաճիկ պաշտօնականների շահատակութիւնների առաջն առնելու մտահոգութեամբ, մահմեդական Ալբանացիք իսկոյն հասկացան բանի էութիւնը և զէնքի բարեհաճ մասնակցութեան դիմեցին, չարաբաստիկ ռէֆորմների իրագործումը խանգարելու նպատակով:

Ընդհանուր ապստամբութիւնն եղաւ ոյս բոլորի հետեւանքը, և տաճիկական զօրքերը մի քանի լուրջ և ծանր պարտութիւններ կրեցին ալբանացիներից: Միաժամանակ տեղի ունեցան նոյն տեսակ դէպքեր և լուրջ ընդհարումներ նաև Մակեդոնիայում: Հետզհետէ ջարդուում են տաճիկական կանոնաւոր զօրքերը: Արդէն 200,000 ի է հասնում տաճիկական զօրքի թիւը, որը սրբազան առաքելութիւն ունի ստանձնած՝ ծնշուածների ապստամբութիւնը խեղդելու և ռէֆորմները, երեւի, բռնի ուժով իրագործել տալու (?) նպատակով: Եւրոպական հանրահռչակ Մեծերը, աչքները չուած, ամեն մէկն իւր նուիրական շահերը չփախեցնելու գեղեցիկ ծրարագիրներ կազմելով, հանդիսատես են լինում արհաւիրքներին ու կատարուող նախաձիւններին:

Արեւելեան քրիստոնեաների ու մանր ազգութիւնների դարեւոր իրաւունքները պաշտպանել յաւակնող նենգ Ալբանի սպաները, Բուլղարի արիւնը խմելուց և նրանց իրենց ճիրանները ձգելուց յետոյ, այժմ՝ ի փա-

ռըս քրիստոնեայ ժողովուրդների, անցնում են Արդիւլ Համիդի ընդհանուր հրամանատարութեան ներքոյ, քրիստոնեաների անբռնաբարելի շահերը պաշտպանելու և նրանց՝ թիւրքի վայրագ զինուորների անսանձ շահատակութիւններից զերծ պահպանելու համար...: Արտառոց և նորահար մարդասիրութիւն...:

Անգլիայի միջամտութեան շնորհով տաճիկական բռնութեան կապանքներից ազատուած Յոյները, Ահմիդասի անարժան զաւակները, 1896 թ. խայտառակութիւնը մուսուլման, օգնութեան և սրբապիղծ զինակցութեան ձեռք են մեկնում իրենց գլուխը ջախջախող կիսալուսնին, ազատութեան համար արիւն թափող հերոս ժողովուրդի գէմ...: Արտասովոր խայտառակութիւն, սրբապիղծութիւն, որին ընդունակ է միայն յուսոյց նենգ, խարդախ և տմարդի ազգը, որը Վ. Պօլսի կոտորածների ժամանակ դոները փակում էր թիւրք արիւնոուշտ դահիճների դաշոյններից ահաբեկ փախչող անձարակ հայերի երեսին...:

Բուլղարացիք և Սերբերն են՝ որ, գլուխները թեքած, անթարթ աչքերով նայում են կատարուող եղիւթութիւններին և կոտորածներին: Դժուար թէ կարողանան մինչև վերջը հանդիսատես մնալ և կռուի մէջ չխառնուել: Իրենց դաւանակից և ազգակից ժողովուրդը անհաւասար կռուի մէջ թէև նախաձիւններ է գործում և հերոսութեան արտասովոր օրինակներ ցոյց տալիս, սակայն դժուար թէ մինչև վերջը՝ իւր բազուկներին ապաւինած՝ կարողանայ զիմադրել տաճիկ հարկը հազարաւոր բաշխօգուկներին, որոնց թեւ ու թիկունք է հանդիսանում քրիստոնէի անունը կրող մի խարդախ կառավարութիւն:

Սակայն Բալքանեան այս փոքրիկ պետութիւններին Ռուսաստանը նոր օրերս զգուշացրեց, որ իրենց հանդարտ պահեն, «խեղճ կենան», ռէֆորմները բարեհաճում են իրագործուել, չլինի թէ Սուլթանի դահիճներին գէմ՝ զէնք վերցնելու ոճիրը յղանան՝ իրենց եղբայրներին օգնելու նպատակով: Օ՛հ, այդպիսի յիմարութիւն գործած ժամանակ, ինքը, Մեծ Խնամակալը, չէզոք դիրք կը բռնի, կը խռովի իւր սանիկների հետ, գլուխը «զալմաղալի» մէջ չի ձգիլ և թող կը տայ, որ իւր «թեւալեւալ»ները իրենց բախտին մնան:

Բայց բաղաբական Բնչ խորը և նրբին հաշիւներ ու ծրագիրներ որոճալով, յանկարծ մի միլիոն փամբուշտներ է ուղարկում՝ նորին Մեծութիւն՝ «Երկրորդ» Նիկողայոսը Բուլղարիային ու Սերբիային՝ իբրեւ նուէր հինաւուրց ժամանակներից մնացած... կամ՝ Ղարադաղի Նիկիտա իշխանին լեռնային թանթանօթներ: Այս նախազգուշութիւնների ժամանակ չէր կարող կարծել, որ Միտրովիցայի նորահաստատ հիւպատոսը անզուսպ Ալբանացու կարմրաշէկ գնդապետին կեր է գնալու: Մի հիւպատոսի կեանքը հաղարապատիկ աւելի թանգ արժէ Մեծ Պետութիւններին համար, քան թէ կոտորուող, մորթուող միլիոնաւոր մի անմեղ ժողովուրդ:

Եւ ահա՛ անյապաղ կախաղան, գլխատում է, որ

պահանջում է ահաբեկչական ծառի հրամանով: Պոմե-
րանիայի մի զինվորի «փտած» ոսկորներն աւելի թանկ
արժեն, քան ամբողջ Արեւելեան հարցը, ասել է եր-
կաթէ գաժան կանցլերը խորին արհամարանքով: Մի
հիւպատոս աւելի թանկ արժէ քան հարիւր հազար
անմեղներ, որոնք զիտապաստ գետին են գլորում Սուլ-
թանի գնդակի առաջ, բայց առանց հատուցման մնում:
Մի վաճառականի շահերի վտանգումն հազարապատիկ
աւելի գերադաս է և զօրեղ պատճառ ֆրանսիական
նաւատորմի գէպի Պոլիս յառաջ խաղալուն, քան թէ
հայկական ահաբեկի կոտորածները և 300,000 անմեղ
զիակները:

Այսպէս, մէկի համար Պոմերանիայի զինվորի փտած
ոսկորներն են արբուծիւն սրբոց, միւսի համար՝ ինչ
կարող է անել Անգլիական կառավարութիւնը կոտորուող
հայերի համար, քանի որ իրենց նաւատորմիցը Արարատ
սարի կատարը չէ կարող բարձրանալ, երրորդի համար,
թող կոտորուին բրիտոնները, լիւիւն, բոնարարուին
ու անարգուին, «հանձարեղ» մինիստրի զգացմունքնե-
րը բթացած են, ուրիշ աւելի կարեւոր գործով ըզ-
բաղուած լինելու համար, վասն զի—այսպէս անմահա-
ցաւ Սուլթանի երգուեալ դաշնակից և շքանշանաւարդ
քաղաքագէտը — դիւանագիտութեան մէջ զգացմունք-
ները գեր չեն խաղում...

Եւ այսպէս անվերջ ցինիք բացաբանուածիւններ
ու սրախօսութիւններ, որոնք հնչում են պառլամենտա-
կան տրիբուններից ու ազնկալից ծափահարութիւնների
հեղեղներ վաստակում հարիւրաւոր կուսակիցներից և վրա-
տահուծեան անարգ քուէ շնորհող պատգամաւորնե-
րից: Այսպիսի ցինիք պատճառաբանութիւններով մի
ժամանակ խեղդեցին հարիւր հազարներով կոտորուող
հայ ժողովրդի արգար ձայնը: Այսպիսի պատճառաբա-
նութիւններով ու սրախօսութիւններով քրիստոնեայ
Մեծ և Խնամակալ պետութիւնները արհաւիրքների ու
բոցերի մէջ թողեցին միլիոնաւոր անմեղ ժողովուրդին,
սակայն դժուար թէ այս անգամ նոյն եղանակով կա-
րողանան Մակեդոնական ապստամբութեան խոյանքների
առաջն առնել՝ ուէֆօրմների անմիտ և ծիծաղելի
աչքակապութեամբ:

Այդ ցոյց կը տայ մօտալուտ ապագան:

ԲԱՂԱԲԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ըստ Վիեննայի «Allgemein Zeitung»-ի Հիւմի
բաշա, Ալպանիոյ ընդհանուր կառավարիչը, իր հրաժարա-
կանը առաջարկած է Սուլթանի ցեղերուն հանդէպ ունե-
ցած վարանոտ քաղաքականութեան համար ոսկայն Սուլ-
թանը մեքժած է ընդունիլ:

«Daily Mail»-ի Սելանիկի թղթակիցը կը գրէ.—
Երէկ Ապր. 10 խիստ շահեկան տօքիւմէնտ մը յանձնու-

եցաւ տեղւոյ Նարոպական հիւպատոսներէն մէկուն: Այն-
պէս կը կարծուի թէ առիկա Պուլիարական յեղ. կազմա-
կերպութեան անգամներէն մէկուն գործն է: Այն կը նկա-
րագրէ կառավարութեան կրկնակի սիւստեմը, որ գունդերը
հաստատած են Մակեդոնիոյ մէջ: Այնպիսեւ ընկերակ-
ցող 2 սակինոց արժէթղթի մը, որ վճարելի է Մակեդոնա-
կան ազատութենէն յետոյ, կըսէ թէ Մակեդոնիոյ բոլոր
ժողովուրդը տուրքի ենթարկելու համար երեք մասերու
որոնք ստիպուած են սոյն արժէթղթերը առնել 1 — 50
ոսկի արծաթութեամբ: Ի հարկին մերժումի պատիժը մահ է:

Քօմիթէներու թղթակցութիւնները կինքու միջնցաւ
կըլլուի, որոնք ազատօրէն կերթեւեկեն Պուլիարական օսհ,
մանազլիին վրայ: Պուլիարական բանակին 180 ի չափ
Մակեդոնացի օջիսները Մակեդոնիա անցած են, շատեր
իբրեւ ուխտաւոր ճամբորդելով:

Վաճառականներ, որոնք գործառնութիւններ ունին
Նարոպայի հետ, հարկադրուած են օչնել գործին շատ մը
ազմամթերքներու ներածումով: Ասոնք ծանօթ են իբրեւ
«ուրբ մասունքներ» որոնք խիստ դիւրութեամբ մացուած
են պաշտօնեաները կաշառելով: Կըսուի թէ ընդամենը
120,000 կարբին ներս բերուած է, բացի ահագին քա-
նակութեամբ փամփուշաներէն, ումբերէն կն:

Նամակադիրը կը շարունակէ. «Պայթիւնն օրը եւ
ժամը որոշուած է, կարգախօսը գրուած և ամեն ինչ պատ-
րաստ է: Երբ ժամանակը գայ, այն ամեն Պուլիարացի
պաշտօնեաները եւ գործաւորները, որոնք երկաթուղիներու
հետ կապակցութիւն ունին, բոլոր կամուրջները և թիւ-
նէլները օդը պիտի հանեն ու հեռագրական թելերը քան-
դեն: Խոսովութիւնը մեծ չափով Մակեդոնիոյ բոլոր քաղաք-
ներուն մէջ պիտի գործադրուի: Յայնժամ տեղի պիտի ու-
նենայ կոտորածի և կողոպտի կանոնաւոր բարեկենդան
մը: Յունական Զատիկը յիշատակուած է օրպէս պայ-
թիւնի որոշուած թուականը:

«Times»-ի Պուլոյ թղթակիցը Ապր. 11 հեռագրով
մը կը հաղորդէ թէ Մանաստէն եկող վերջին լուրերուն
նայելով վիլայէթին մէջ դրութիւնը շատ սղբալի է: Սպա-
նութիւն, կողոպուտ ու ամեն տեսակ անգթութիւններ ա-
նորեայ պատահական բաներ դարձած են:

«Տէլիկ Մէլլի»-ի կը գրեն Պուլէն.— Ապր. 16. Պալա-
տին մէջ անհանգստութիւն մը կը տիրէ Մանաստի վի-
լայէթին ահաբեկի գրութեան պատճառով, ուր ումբերով
գինուած գունդեր երևնալ օկուած են: Պօրիս Սարաֆովի
հաբամաններուն ներքե կը գործեն անոնք:

Սուլթանը երէկ երկու նախարարական ժողովներ
գումարեց պալատին մէջ եւ առջի գիշեր Արտաքին Գոր-
ծոց նախարարը երկու ժամուան տեսակցութիւն մը ու-
նեցաւ պ. Զինովիէֆի հետ:

Ալպանիոյ դրութիւնը շատ տաղնապալի է: Սուլ-
թանի խաղաղութեան պատգամները ի դերեւ ելան և իբեք
400 ալպանացիներէ պաշարուած է, որոնք Ալպանիացի
կառավարիչ մը, դատաւորներ և ժանտարմաներ կը պա-
հանջեն: Կառավարութիւնը բանակատեղիներ պիտի շինէ
երեւելի քաղաքներուն մօտերը, 25,000 հօգի աշխատ-
ցնելով, և ահագին ոյժ դրկէ այդ ապստամբները խաղա-
ղեցնելու համար: Իրերու այս տխուր երեւոյթին պատճա-
ռով երեկուրէն ի վեր գեոպանները այցելութիւններ կը
փոխանակեն:

Նոյն թերթին մէկ ուրիշ թղթակիցը կը հաղորդէ
հետեւեալը.— Ապրիլ 19. Ալեքսանտր թագաւորին վա-

խերը.— Ճիշդ Սերպիայէն վերադարձայ, ուր Ալեքսանտր թագաւորը Պալքանեան դրութեան մասին ինձ շատ մը շահեկան տեղեկութիւններ տալու բարութիւնն ունեցաւ։

Լոնդոն թէ ես «Տէլլի Գէլլ»-ի Կերկայացուցիչն եմ թագաւորը Անգլիոյ նկատմամբ իր արհամարանքը յայտնեց, որն, այնքան քիչ կը հետաքրքրուի Պալքանեան գործերով։ Սրաւետ, անշահասէր պետութիւն մը որպէս Անգլիան, ըսաւ, կրնար շատ բաներ ընել ներկայ վիճակի խաղաղութեան համար, մինչդեռ միւսները կը ձգտին միայն գրութիւնը խառնաշփոթելու։

«Իսկ թիւրքիա կառավարելու բնդունակ է, շարունակեց Ն. Ալեքսանտրութիւնը, ինչու ուժորձները կը պնդեն։ Իսկ թէ որ անկարող է կառավարելու, այն աւեն անօգուտ է թիւրքիոյ ուժորձները գործադրելու ըստիպումը, քանի որ կընդունուի թէ ընդունակութիւն չունի կառավարելու»։

Թագաւորը ջերմ գովեստով խօսեցաւ Աւստրիոյ բռնած զիրքին հանդէպ. «Պալքանեան ներկայ դրութիւնը յուսահատական է, շարունակեց թագաւորը, թէեւ հիմա ներքին խռովութիւններէն չեմ վախնար, սակայն Ալպանիոյ յուզիչ վիճակը ոտակալի վտանգ կ'ապահովայ։ Մակեդոնական հարցը այնքան ահոնելի չէ որքան Ալպանիականը, որ կատարեալ խոչնդոտ մըն է Պալքանեան խաղաղութեան։ Միթոսովիցայի Ռուսական դեսպանին մահը դրութիւնը աւելի տագնապալի դարձուց, քանի որ Ռուսիա զայն ըսպանողը կը պահանջէ։

«Կերկայի հանդարտ երևոյթը լոկ ժամանակաւոր մեղմացում մ'է, քանի որ Ալպանիացիք կ'ապաստեն տեւեներու թէ ինչ քաջ պիտի առնուի իրենց հանդէպ, սակայն նորանոր խռովութեանց զալուստը անտարակուսելի է։

«Ալպանիոյ դրութեան ուրիշ մէկ վտանգն ալ թերքական գունդերու կուտակումն է Հին Սերպիոյ մէջ։ Իթէ այս երկար շարունակութիւն, ես ալ նախագգուշական քայլեր պետք է առնեմ։ Սերպիա բնաւ օկզբնական իրաւունքը պիտի չստանձնէ։ Արկին, ըսաւ թագաւորը, եթէ նոյն իսկ Պալքանեան նահանգները հարկադրեն՝ Սերպիան չը պիտի և չը կրնար ուշադրութիւն դարձնել, բայց միայն պէտք է իւր շահերը պաշտպանէ»։

Ապրիլ 18.— Իտալական հիւպատոսը երէկ խնդրեց Սուլթանէն ազգու միջոցներ գործածել Ալպանացոց դժգոհերման գործակատարը զինուորական հասնմատական միջոցներու մասին խօսեցաւ ու Սուլթանը խոստացաւ առաջարկուած քաղաքականութիւնը ի գործ դնել։

Աւստրիական եւ Ռուսական դեսպանները երէկ, երկուքը միասին արտակարգ տեսութիւն մը ունեցան Սուլթանի հետ ու Ալպանացոց վայրագ ընթացքը ցոյց տալով խիստ լեզու մը գործածեցին, յայտարարելով զայն իբրեւ խրախոյս Պուրկարիոյ եւ Մակեդոնիոյ մէջ նորանոր շարժումներու ու ներկայ կացութեան վերջ մը դնելու հարկաւորութիւնը մատնանիշ ըրին։

Ապա թէ ոչ, շարունակեցին, երկրին այս անհանդարտ դրութենէն յառաջ գալիք վեասները խիստ աղէտալի կրնան ըլլալ, որոնց բոլոր պատասխանատուութիւնը կը ծանրանայ Օսմանեան կայսրութեան վրայ, եւ որ այդ վիճակին մէջ ինքզինքը մեկուսացած պիտի գտնէ։ Գեսպանները լոկ Ալպանիոյ կացութեան մասին, ու բնաւ ակնարկութիւն մը չըրին Մակեդոնիոյ կամ Աւստրո-Ռուսական ռէֆորմներու գործադրումին վերաբերմամբ։

Սուլթանը ի պատասխան ասոնց, գահացուցիչ ապահովութիւններ տուաւ թէ ամէն միջոց պիտի չխնայէ Ալ-

պանացոց իր հեղինակութիւնը յարգել տալու համար։

Պալքանեան տագնապը այժմ իր գագաթնակէտին հասած է, եւ շուտով Ալպանացիք ակնհաստէս պիտի ըլլան կամ խաղաղութեան եւ կամ խռովայոյզ շարժման։

Ֆրեյցովիչի մէջ Լատին Բէտիֆ գորաբաժնի մը եւ Ջովանայէն երեք նիգամ գումարտակներու համախմբումը վերջացած է, եւ Մարաշախտ Էսմէր Բուշտի բաշախ առաջին գործը պիտի ըլլայ Սուլթանի մասնաւոր յանձնարարովը ազատել, որուն անդամները իբրեւ պատանդ առ այժմ Իթէքի մէջ վար դրուած են։ Ալպանացիներու կողմէ, ուր միայն մէկ գումարտակ գորաբաժնի կայ։

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Կուսակցութեանս կենտ. գանձարանում շնորհակալութեամբ քստացել են.—

ՍՈՒՆԻՍՅՈՒ ՀՆՃ. Մասն. -ից 300 ֆ. :
ՄԱՆԱՀԱՆԳՍՏԻ, ՀՆՃ. Մասն. -ից 50 ր. :
Լոնտոնի ՀՆՃ. Մասն. -ից 3 անգլ. ֆ. :
Նոյն Մ-ից Կուս. գրքոյկների վաճառումից գոյացած 1 շ. 9 ֆ. :

«ՐԱՆՆՈՐ», Մասն. -ի վարչութիւնը ստացել է Նւէր՝ Նո. 85 անդորրագրով Առիւծից՝ եւ Նո. 86 անդորրագրով Տապարից մի մի բերդանի հրացան. Նո. 87 անդորրագրով Կարոյից մի վեցհարկանաւատըմանակ եւ 91 փամիւռուտ։

Ներդատուների ցանկութեան համաձայն, տպագրում ենք իրենց անունները՝ այն 58 րուպլու, որի 56 րուպլին ստացել է կենտ. վարչութիւնս Եւպատորիայից՝ Սեր. Խաչ.— եւս եւ Առ. Գրիգ.— եւս աւստրալիոյ ստորագրուած նամակի հետ եւ որը տպագրուած է 1902 թ. Նո. 5 Հնչակում՝ այսպէս, Եւս...ից պ Առ. Գր...ի միջոցաւ 56 ր. :
Ներդատուներն են՝ Պողոսյան, Երկաթ, Գուրումաթ, Խոնտի, Լուսին, Դըմէտ, Զալիկ, Հուր, Գեղաի, Արապոյ 3-ական ր., Եղթայ Այառց, Ասլան, Յուլաի, Կայծակ 2-ական ր., Սուր, Գալլ, Մուրաճալ, Նոյալ, Նապաստակ, Թնդանթ, 1. 50-ական ր., Բէլ, Պիճակ, Կրակ Արքե, Խապլան, Գարիծ, 1-ական ր., Յուլաի 2. 50 ր., Ատրճանակ 50 ր.

Տարւոյս Նո. 1 Հնչակում տպագրել խոստացած հաշիւների շատութեան պատճառաւ, հրատարակեցինք առանձին թերթերով, որ եւ ուղարկում ենք բոլոր Մասնաճիւղներին, իսկ այստեղ զետեղում ենք միայն «Նոր-Նաւասանգիստ», ի հաշիւները, որ հետեւեալն է.—

— Առաջին թերթիկ —
Վճարել են.— պ. զ. Բիթապ.— Տէլիսի, Կայծակ, Արա-Շանթ, Վաշտոպատ, Թաթուլ Մորակ, Աշոտ-Երկաթ, եւ Գալլ-Վահան—յուսինիս, յուլիս, օգոստոս եւ սեպտեմբեր ամսավճարները 4-ական րուպլում մըն 32 ր. եւ Ասպատակ յուլիս, յուլիս, օգոս. ամսավճարներ 6 ր. իսկ Ռաֆֆի միայն յուլիս, յուլ. ամս. 2 ր. : Դուրմար 40 ր. որի 20 ր.-ը որկուած է կենտրոն իսկ մնացած 20 րուպլին ծախսել է տեղական պէտքերի համար

— Երկրորդ թերթիկ —
Մասնաճիւղի վարչութիւնը շնորհակալութեամբ ստացել է.— ՍՄԲԱՍԱՆՆԻՅՈՒ 80 ր., որի 20 ր.-ին գոյացել է ծնողի գեշեր Անտիս մաս գալուց, 4 ր. վիճակախաղից, մնացեալը Միաստաւանի, Մասիսի եւ Չորակի Հնչ. խմբերի ամսավճարներից։
ՄԱՍԻՍԻՅՈՒ 24 ր., որ գոյացել է Մասիս խմբի «Դժուկը», եւ «Վրէժ» խմբերի եւ Չորակի մեր ընկերների ամսավճարներից 1. 50 էլ Մասիսից դարձեալ ընկալագիծների հաշիւն։
ՆՈՐ-ՆԱՆԱՀԱՆԳՍՏԻՅՈՒ «Հայրենասէր» խմբի 7 ր. ապրիլի ամսավճար։ Նոր-Նաւասանգիստի Նոր ընկերներից՝ Մուր 1., Տուշման 50 ր., Զէրուշ 1. 50 ր., Զիման 1 ր., Ժաղիկ 1. 50 ր., Օգնական 1 ր., Բաշ 30 ր. ՄՐՏԱՅԱՍԻՅՈՒ «Ոխերիւ» խմբից 17 ր. Ներքել են՝ Նոր-Ժաղի 10 ր. Կայծակ 2 ր., Առիւծ 2 ր., Վրոյր 2 ր., Բազէ 1 ր. :
ԴԵՏԱՓԻՅՈՒ «Հնոց» խմբից՝ Ոսկան 1. 50 ր. : Ընդամենը 137. 80 ր.

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ
դրամ ու մանգատ ուղարկել հետեւեալ հասցէով.—

M. Bellart, 85, Peckham Rye,
London, S. E. [Angleterre].
ՏՊԱՐԱՆ «ՀԵՁԱԿ»-Ի ԼՕՆԴՕՆ